ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

(գիտական աշխատանքների ժողովածու)

12/2011 թ. (172)

СОЮЗ СТРОИТЕЛЕЙ АРМЕНИИ

ИЗВЕСТИЯ

BULLETIN

BUILDER UNION OF ARMENIA

ԵՐԵՎԱՆ 2011

Հայաստանի շինարարների միության տեղեկագիր
Известия Союза Строителей Армении
Bulletin Builders of Armenia

Խմբագրական խորհուրդ

Ալբերտ Մարգարյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.05), Աշոտ Մարկոսյան (տնտ. դ., Հայաստան)՝ (Ը.00.02), Արեստակ Սարուխանյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.03), Արեստ Բեգլարյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.06), Գագիկ Գալստյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.02), Գուրգեն Սինասյան, պատասխանատու քարտուղար, Լևոն Չիլինգարյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (ԻԴ. 04.02), Գարրի Ռաշիդյան (ճ.դ., Հայաստան)՝ (ԺԸ.00.01), Գիվի Գավարդաշվիլի (տ.գ.դ., Վրաստան)՝ (Ե.23.03), Էդուարդ Խաչիյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.01), Մանվել Պողոսյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.04), Յուրի Սաֆարյան, գլխավոր խմբագիր, (ճ.դ., Հայաստան)՝ (ԺԸ.00.01), Չժեն Վենտան (տնտ. դ., Չինաստան)՝ (Ե.23.02), Պարգև Բալջյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.05), Վլադիմիր Համբարձումյան (տ.գ.դ., Հայաստան)՝ (Ե.23.01):

Редакционный совет

Альберт Маргарян (к.т.н. Армения) (Ե.23.05), Ашот Маркосян (д.э. Армения) (Ը.00.02), Арестак Саруханян (д.т.н. Армения) (Ե.23.03), Арест Бегларян (д.т.н. Армения) (Ե.23.06), Гагик Галстян (д.т.н. Армения) (Ե.23.02), Гурген Минасян ответственный секретарь, Левон Чилингарян (д.т.н. Армения) (ԻԴ. 04.02), Гарри Рашидян (д.а. Армения) (ԺԸ.00.01), Гиви Гавардашвили (д.т.н. Грузия) (Ե.23.03), Эдуард Хачиян (д.т.н. Армения) (Ե.23.01), Манвел Погосян (д.т.н. Армения) (Ե.23.04), Юрий Сафарян главный редактор, (д.а. Армения) (ԺԸ.00.01), Чжен Вентан (д.э. Китай) (Ե.23.02), Паргев Балджян (д.т.н. Армения) (Ե.23.05), Владимир Амбарцумян (д.т.н. Армемия) (Ե.23.01).

Editorial council

Albert Margaryan (candidate of technical science) (Ե.23.05), Ashot Markosyan (doctor of economic science.) (Ը.00.02), Arestak Saruxanyan (doctor of technical science) (Ե.23.03), Arest Beglaryan (doctor of technical science) (Ե.23.06), Gagik Galstyan (doctor of technical science) (Ե.23.02), Gurgen Minasyan executive secretary, Levon Chilingaryan (doctor of technical science) (ԻԴ. 04.02), Garry Rashidyan (doctor of architecture) (ԺԸ.00.01), Givi Gavardashvili (doctor of technical science) (Ե.23.03), Eduard Xachiyan (doctor of technical science) (Ե.23.01), Manvel Pogosyan (doctor of technical science) (Ե.23.04), Yuri Safaryan editor-in-chief (doctor of architecture) (ԺԸ.00.01), Chjen Ventan (doctor of economic science) (Ե.23.02), Pargev Baldgyan (doctor of technical science) (Ե.23.05), Vladimir Hambardzumyan, (doctor of technical science) (Ե.23.01).

Տեղեկագիրը երաշխավորված է տպագրության Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2011 թվականի N 1359-Ն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի՝Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10 օրվա ընթացքում հաստատել տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Տ. Սարգսյան

2011 թ. սեպտեմբերի 28
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 22-ի N 1359-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրական վտանգավոր օբյեկտների (այսուհետ՝ ԱՎՕ) տեխնիկական անվտանգության փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) իրականացման ընթացակարգերին ներկայացվող հիմնական պահանջները:

2. Սույն կարգում օգտագործվում է հետևյալ հիմնական հասկացությունը՝

փորձագետ կամ փորձագիտական խումբ բարձրագույն մասնագիտական կրթություն և տեխնիկական անվտանգության կոնկրետ ոլորտում համապատասխան որակավորում ունեցող մասնագետ կամ մասնագետներ:

3. Սույն կարգում օգտագործվող մնացած հասկացություններն ունեն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հասկացությունների միևնույն իմաստը:

4. Փորձաքննության հիմնական նպատակն է ուսումնասիրել և տալ եզրակացություն արտադրական վտանգավոր օբյեկտի շինարարության, ընդլայնման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, կոնսերվացման, ապամոնտաժման նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր), տեխնիկական անվտանգության վկայագրի, շահագործվող կամ գործարկման ենթակա ԱՎՕ-ների շենքերի, շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների և տեխնիկական միջոցների՝ տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին համապատասխանության մասին:

5. Փորձաքննությունն իրականացվում է՝

1) նախագծային փաստաթղթերի նկատմամբ՝ նախագծման փուլի ավարտին՝ մինչև նախագծային փաստաթղթերի հաստատման պահը.

2) տեխնիկական անվտանգության վկայագրի նկատմամբ՝ մինչև ԱՎՕ-ի շահագործումը.

3) գործարկվող (վերագործարկվող) ԱՎՕ-ների նկատմամբ՝ նախքան գործարկման (վերագործարկման) աշխատանքները սկսելը.

4) շահագործվող ԱՎՕ-ների նկատմամբ՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցվելուց հետո:

II. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքում փորձաքննություն իրականացնում են «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնե պետական ոչ առևտրային կազմակերպությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված ու լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ փորձագիտական կազմակերպություն):

7. Փորձագետը փորձաքննության իրականացման պայմանագրի, սույն կարգի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն ԱՎՕ-ում իրականացնում է փորձաքննություն:

8. ԱՎՕ-ում փորձաքննության իրականացման ընթացքում փորձագետի կողմից ուսումնասիրվում են ԱՎՕ-ի նախագծային փաստաթղթերը, տեխնիկական անվտանգության վկայագիրը, շահագործվող կամ գործարկման ենթակա ԱՎՕ-ների շենքերը, շինությունները, տեխնոլոգիական սարքավորումները և տեխնիկական միջոցները, որոնք պետք է համապատասխանեն արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության, բնակչության հիգիենիկ ու սանիտարահամաճարակային բարեկեցության ապահովման, շրջակա միջավայրի պահպանման, բնապահպանական անվտանգության, հրդեհային անվտանգության և շինարարական նորմերի, ինչպես նաև գործող ստանդարտների պահանջներին:

9. Փորձաքննության ընթացքում փորձագետը պետք է՝

1) ԱՎՕ-ում փորձաքննության իրականացման ընթացքում պահպանի «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ իրավական ակտերի, նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերի պահանջները.

2) փորձաքննություն իրականացնի տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ պատշաճ որակով և ամբողջ ծավալով:

10. Փորձաքննության արդյունքում փորձագետի կողմից կազմվում է փորձագիտական եզրակացություն՝ լիազորմարմնիհետևակավարիկողմիցհաստատվածձևինհամապատասխան:

11. Յուրաքանչյուր ԱՎՕ-ի համար կազմվում է առանձին փորձագիտական եզրակացություն:

12. Փորձաքննության ընթացքում, մինչև փորձագիտական եզրակացություն կազմելը, փորձագետի և ԱՎՕ շահագործող անձի միջև կարող է կազմվել բացահայտված թերությունների վերացման միջոցառումների ծրագիր, եթե բացահայտված թերություններն իրենց բնույթով տվյալ պահին տեխնածին վթարի սպառնալիք չեն առաջացնում:

13. Փորձագիտական եզրակացությունը կազմվում է միջոցառումների ծրագրով սահմանված ժամկետի ավարտին՝ միջոցառումներիծրագրովսահմանվածթերություններիվերացմանփաստըփորձագետիկողմից արձանագրվելուցհետո:

14. Փորձաքննության իրականացման ընթացքում տեխնածին վթարի սպառնալիք առաջացնող թերությունների բացահայտման դեպքում փորձագետի կողմից անմիջապես կազմվում է անհամապատասխանության մասին փորձագիտական եզրակացություն, որում պետք է նշվեն վթարի սպառնալիք հանդիսացող խախտումները, դրանց բնույթն ու մասշտաբները:

15. Փորձագիտական եզրակացության կազմումից հետո այն ստորագրվում է փորձաքննություն իրականացրած փորձագետի և հաստատվում փորձագիտական կազմակերպության ղեկավարի կողմից:

16. Փորձագետի կողմից փորձաքննության իրականացումն ավարտված է համարվում փորձագիտական եզրակացության կազմման և ԱՎՕ շահագործող անձին տրամադրման պահից:

17. Փորձագետն իր կողմից ոչ հավաստի փորձագիտական եզրակացություն կազմելու համար կրում է պատասխանատվություն՝«Տեխնիկականանվտանգությանապահովմանպետականկարգավորմանմասին»Հայաստանիհանրապետությանօրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

III. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

18. Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝

1) փորձաքննության իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը.

2) ում կողմից և ինչ ժամկետներում է իրականացվել փորձաքննությունը.

3) ԱՎՕ-ի անվանումը և գտնվելու վայրը.

4) փորձաքննության ընթացքում տրված տեղեկություններ միջոցառումների ծրագրի և կատարման ընթացքի մասին.

5) տվյալներ ԱՎՕ-ի անվտանգ շահագործմանը վերաբերող փաստաթղթերի մասին (նախագծեր, լիցենզիաներ, պայմանագրեր, սերտիֆիկատներ, ակտեր և այլն).

6) ԱՎՕ-ում շահագործվող տեխնիկական միջոցների և տեխնոլոգիական սարքավորումների վիճակը բնութագրող տեղեկություններ, վերլուծություններ, եզրահանգումներ.

7) տեղեկություններ ԱՎՕ-ի ինժեներատեխնիկական և մասնագետ կադրերի պատրաստվածության մասին:

19. Փորձագիտական եզրակացությունը կազմվում և հաստատվում է երեք օրինակից:

20. Փորձագիտական կազմակերպությունն իր կողմից տրված փորձագիտական եզրակացության մեկ օրինակը ներկայացնում է լիազոր մարմնին. այն սահմանված կարգով հաստատվելուց հետո եռօրյա ժամկետում, իսկ վթարի սպառնալիք արձանագրվելու դեպքում՝ անմիջապես, որպեսզի կարգադրագրով արգելվի ԱՎՕ-ի հետագա շահագործումը:

21. Փորձագիտական եզրակացության երկրորդ օրինակը հանձնվում է ԱՎՕ շահագործող անձին, իսկ փորձագիտական եզրակացության երրորդ օրինակը պահվում է փորձագիտական կազմակերպությունում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հոկտեմբերի 2011 թվականի N 1407-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 788-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազննման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 788-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 6-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետի «ա» պարբերությունը «ձևը», բառից հետո լրացնել «պետական գրանցման համարը» բառերով,

բ. ուժը կորցրած ճանաչել 1-ին ենթակետի «գ» պարբերությունը,

գ. 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը «ազգանունը,» բառից հետո լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,» բառերով,

դ. ուժը կորցրած ճանաչել 2-րդ ենթակետի «,գ» և «գ» պարբերությունները.

2) կարգի N 1 ձևում՝

ա. «հարկ վճարողի հաշվառման համարը» բառերը փոխարինել «պետական գրանցման համարը,» բառերով,

բ. ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետը,

գ. 4-րդ կետը «մասնագետների մասին» բառերից հետո լրացնել «ձև N 3» բառերով, իսկ «գրքույկ» բառից հետո՝ « աշխատանքային պայմանագիր» բառերով,

դ. 5-րդ կետը «ցանկը» բառից հետո լրացնել «ձև N 4» բառերով.

3) կարգի N 2 ձևում՝

ա. երկրորդ տողում «հարկ վճարողի հաշվառման համարը» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,» բառերով,

բ. ուժը կորցրած ճանաչել 2-րդ և 4-րդ կետերը,

գ. 5-րդ կետը «մասնագետների մասին» բառերից հետո լրացնել «ձև N 3» բառերով,

դ. 7-րդ կետը «ցանկը» բառից հետո լրացնել «ձև N 4» բառերով.

4) որոշման N 2 հավելվածից հանել «գործունեության տեսակը» տողը:

2. Սույնորոշումըուժիմեջէ մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Տ. Սարգսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2011 թվականի N 1411-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N 510-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 778-Ն և N 779-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 510-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կարգի 2-րդ կետից հանել «կամ ոլորտների» բառերը.

2) կարգի 10-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետի «ա» պարբերությունը «ձևը,» բառից հետո լրացնել «պետական գրանցման համարը,» բառերով,

բ. 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը «ազգանունը,» բառից հետո լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,» բառերով.

3) կարգի N 1 ձևի առաջին տողը լրացնել «պետական գրանցման համարը» բառերով.

4) կարգի N 2 ձևի առաջին տողը լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը» բառերով.

5) կարգի N 5 ձևի առաջին տողը լրացնել «կազմակերպության անվանումը» բառերով.

6) կարգի N 6 ձևում՝

ա. առաջին տողը լրացնել «կազմակերպության անվանումը» բառերով,

բ. ձևը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«4) պետական տուրքի վճարման անդորրագիրը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. հոկտեմբերի 11
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2011 թվականի N 1414-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 774-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազոտության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 774-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 10-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը ,ձևը,ե բառից հետո լրացնել «պետական գրանցման համարը,» բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել 10-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը.

3) 10-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը «ազգանունը,» բառից հետո լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,»բառերով.

4) ուժը կորցրած ճանաչել 10-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունները.

5) N 1 ձևում՝

ա. երկրորդ տողում «հարկ վճարողի հաշվառման համարը» բառերը փոխարինել «պետական գրանցման համարը» բառերով,

բ. ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետը,

գ. 4-րդ կետը «մասնագետների մասին» բառերից հետո լրացնել «N 3 ձև» բառերով, իսկ «գրքույկ» բառից հետո՝ «աշխատանքային պայմանագիր» բառերով.

6) N 2 ձևում՝

ա. «հարկ վճարողի հաշվառման համարը և սոցիալական քարտի համարը» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը» բառերով,

բ. ուժը կորցրած ճանաչել 2-րդ և 4-րդ կետերը,

գ. 5-րդ կետը «մասնագետների մասին» բառերից հետո լրացնել «N 3 ձև» բառերով,

դ. 7-րդ կետը «ցանկը» բառից հետո լրացնել «N 4 ձև» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. հոկտեմբերի 11 Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2011 թվականի N 1415-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 777-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 777-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կարգի 2-րդ կետից հանել «կամ ոլորտների» բառերը.

2) կարգի 9-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետի «ա» պարբերությունը «ձևը,» բառից հետո լրացնել «պետական գրանցման համարը» բառերով,

բ. 2-րդ ենթակետի ,աե պարբերությունը «ազգանունը» բառից հետո լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,» բառերով.

3) կարգի N 1 ձևի առաջին տողը լրացնել «պետական գրանցման համարը» բառերով.

4) կարգի N 2 ձևի երկրորդ տողում «Սոցիալական քարտի համարը» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը» բառերով.

5) կարգի N 5 ձևում՝

ա. առաջին տողը լրացնել «կազմակերպության անվանումը, պետական գրանցման համարը» բառերով,

բ. հանել «Սոցիալական քարտի համարը» տողը.

6) կարգի N 6 ձևում՝

ա. առաջին տողը լրացնել «կազմակերպության անվանումը» բառերով,

բ. հանել «Սոցիալական քարտի համարը» տողը,

գ. ձևը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

,4) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2011 թվականի N 1439-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 775-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 775-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով.

3) քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիայի ներդիրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2) որոշումը լրացնել նոր՝ N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի.

3) որոշմամբ հաստատված կարգում՝

ա. 2-րդ կետից հանել «կամ ոլորտների» բառերը,

բ. 10-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը «ձևը,» բառից հետո լրացնել «պետական գրանցման համարը» բառերով,

գ. 10-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը «ազգանունը,» բառից հետո լրացնել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը,»բառերով,

դ. N 1 ձևի առաջին տողը լրացնել «պետական գրանցման համարը» բառերով,

ե. N 2 ձևի երկրորդ տողում«Սոցիալական քարտի համարը» բառերը փոխարինել «անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը» բառերով.

4) կարգի N 5 ձևում՝

ա. առաջին տողը լրացնել «կազմակերպության անվանումը, պետական գրանցման համարը» բառերով.

բ. հանել «Սոցիալական քարտի համարը»տողը.

5) կարգի N 6 ձևում՝

ա. առաջին տողը լրացնել «կազմակերպության անվանումը» բառերով,

բ. հանել «Սոցիալական քարտի համարը»տողը,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

,4) Պետական տուրքի վճարման անդորրագիրը:ե:

2. Սույնորոշումնուժիմեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Տ. Սարգսյան

2011 թ. հոկտեմբերի 14
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1439-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2009 թվականի
հուլիսի 2-ի N 775-Ն որոշման

<u>ՁԼ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

_____
(լիցենզիայի և ներդիրի համարները)

_____
(կազմակերպության անվանումը և որակավորված մասնագետի անձնագրի տվյալները)

_____
(գործունեության ոլորտը)

_____
(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

_____

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում:»:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2011 թվականի N 1541-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Քննակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշմամբ սահմանված կարգի՝

ա. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշմանը համապատասխան, ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար փորձաքննությունը կարող է փոխարինվել նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին նախագծային փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ երաշխավորագրով:

Նախագծային փաստաթղթերի համալիր փորձաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, ինչպես նաև համապատասխան փորձագիտական կամ մասնագիտական եզրակացություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմինների մասնակցությամբ՝ սույն կետում նշված որոշմամբ սահմանված կարգով:»,

բ. 13.3-րդ կետը «չի պահանջվում» բառերից հետո լրացնել «գոտևորման նախագծից շեղումներ չպարունակելու պայմանով:» բառերով.

2) 2-րդ կետի՝

ա. «ա» ենթակետով հաստատված ցանկը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի,

բ. «բ» ենթակետով հաստատված ցանկը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 11-րդ կետը «արտակարգ իրավիճակների» բառերից հետո լրացնել «(հրդեհների, պայթյունների, փլուզումների և այլն)» բառերով, «համապատասխան փորձագիտական» բառերից հետո՝ «և (կամ) համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական» բառերով, իսկ «օժտված շահագրգիռ» բառերից հետո՝ «պետական» բառով.

2) ուժը կորցրած ճանաչել 12-րդ կետի 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերը.

3) 25-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) մինչև 5 մետր բարձրություն ունեցող ոչ հիմնական օբյեկտները, ինչպես նաև թենիսի կորտերը, բասկետբոլի և վոլեյբոլի հրապարակները, այլ սպորտային նշանակության բացօթյա հարթային կառույցները (առանց տրիբունաների)՝ անկախ դրանց չափերից:».

4) 31-րդ կետի 4-րդ ենթակետում «5-րդ և 6-րդ ենթակետերումե բառերը փոխարինել .5-րդ ենթակետում» բառերով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 13-ի «Մեյսմիկ պաշտպանության բնագավառում հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների ցանկը սահմանելու մասին» N 237-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. նոյեմբերի 2
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1541-Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 1998 թվականի
դեկտեմբերի 21-ի N 812 որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ) ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ օբյեկտներ են համարվում՝

1) հատուկ նպատակային նշանակության հողերում իրականացվող օբյեկտները՝

ա. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի, դրանց կազմավորումների և մարմինների, պաշտպանական, ռազմական ենթակառուցվածքի տարածքներում, այդ թվում՝ զինվորական բնակավայրերում իրականացվող բնակելի, հասարակական, արտադրական, ինչպես նաև այլ նշանակության շենքերը և շինությունները,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված՝ սահմանային գոտում իրականացվող շենքերը և շինությունները, օրենքով պաշտպանվող շենքերը և շինությունները.

2) բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվող շենքերը և շինությունները.

3) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված օբյեկտների).

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» N 1008-Ն որոշման 1-ին կետով սահմանված օբյեկտները։»։

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1541-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 1998 թվականի
դեկտեմբերի 21-ի N 812 որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ՝ ԿԱՐԵՎՈՐ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում կարևորագույն նշանակության օբյեկտներ են համարվում՝

1) հասարակական շենքեր և շինություններ՝

ա. դպրոցներ (կրտսեր, միջնակարգ և ավագ), արտադպրոցական կազմակերպություններ, հատուկ դպրոցներ, նախադպրոցական կազմակերպություններ,

բ. երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, տարեցների և հաշմանդամների տուն ինտերնատներ,

գ. պոլիկլինիկաներ, առողջության պահպանման կենտրոններ, ամբուլատորիաներ, հիվանդանոցներ, ծննդատներ, հոսպիսներ,

դ. միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ,

ե. գիտական, գիտահետազոտական, նախագծային կազմակերպություններ, բանկեր, գրասենյակներ և այլ վարչական օբյեկտներ՝ 200 և ավելի աշխատատեղով,

զ. ռեստորաններ, սրճարաններ և հանրային սննդի այլ օբյեկտներ՝ 200 և ավելի տեղով,

է. հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ 200 և ավելի տեղով,

ը. մշակույթի կենտրոններ, թատրոններ, կրկեսներ, կինոթատրոններ, համերգասրահներ՝ դահլիճի 300 և ավելի նստատեղով,

թ. բենզալցակայաններ, գազալցակայաններ,

ժ. առևտրի կենտրոններ, հանրախանութներ և տոնավաճառներ՝ 1500 քառ. մետր և ավելի ընդհանուր մակերեսով,

ժա. զվարճությունների և հանգստի կազմակերպման կենտրոններ (հրաձգարաններ, բիլիարդի, բոուլինգի, սեղանի թենիսի և համանման խաղերի կազմակերպման համար նախատեսված օբյեկտներ) և խաղատներ՝ 100 և ավելի այցելուի համար,

ժբ. թանգարաններ, պատկերասրահներ, ցուցասրահներ՝ 1500 քառ. մետր և ավելի ընդհանուր մակերեսով,

ժգ. դատարաններ՝ 4 և ավելի դատավորներով,

ժդ. ուսիվերսալ փակ մարզադահլիճներ՝ 1500 և ավելի նստատեղով, լողավազաններ՝ ավազանի ջրի հայելու 25.0 x 50.0 մետր և ավելի չափերով,

ժե. գրադարաններ, արխիվներ, ավանդապահոցներ՝ 1 մլն և ավելի միավորով,

ժզ. ավտոկայաններ՝ 50000 և ավելի բնակիչ ունեցող քաղաքների համար,

ժէ. բազմահարկ վերգետնյա ավտոկանգառներ՝ 100 և ավելի ավտոմեքենայի համար, ստորգետնյա ավտոկանգառներ՝ 50 և ավելի ավտոմեքենայի համար,

ժը. դիվանագիտական ներկայացուցչություններ,

ժթ. երկաթուղային կայարաններ՝ 3 և ավելի կառամատույցներով,

ի. օդանավակայաններ,

իա. մետրոպոլիտեն,

իբ. հեռուստառադիոկենտրոններ, հեռուստաաշտարակներ,

իգ. քաղաքաշինական համալիրներ, որոնք իրենց կազմում ունեն սույն ցանկում ընդգրկված օբյեկտները.

2) բազմաբնակարան բնակելի և բազմաֆունկցիոնալ շենքեր, ինչպես նաև քաղաքաշինական համալիրներ կամ թաղամասեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերը գերազանցող կառուցապատման մակերեսով.

3) 10 և ավելի հարկայնության կամ 28 մետր բարձրությունը գերազանցող օբյեկտներ.

4) արդյունաբերական, ընդերքօգտագործման, գյուղատնտեսական և այլ արտադրական նշանակության, հիդրոտեխնիկական, կոմունալ, պահեստային, էներգետիկայի, կապի, ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներ՝

ա. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» N 193 որոշմամբ սահմանված օբյեկտները,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հիմնական ցուցանիշները հաստատելու մասին և պետական հատուկ նշանակության հիդրոհանգույցների ցանկը սահմանելու մասին» N 1862-Ն որոշման N 2 հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 31-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հայտարարագրի բովանդակությունը, դրա մշակման և փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» N 957-Ն որոշմամբ սահմանված օբյեկտները,

գ. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օբյեկտները,

դ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների կողմից

պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» N 1008-Ն որոշման 2-րդ կետով սահմանված օբյեկտները,

ե. «Շրջակա միջավարի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի N 1 հավելվածով սահմանված օբյեկտները։»:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար Դ. Սարգսյան